

*Պատմության հարցեր, պրակ 1,  
Երևանի համալսարանի հրատարակչություն,  
2009թ., 138-143 էջեր*

Անահիտ Ռուբենի Մենենձյան

## Ժանրային զարգացումներ. ընդդեմ թե՞ հանուն Ժանրագիտության

### Մուտք

Խորքային ընկալման պարագայում բացահայտվում է պատմության և լրագրագիտության անմիջական աղերսը: Երկուսն էլ ուշադիր են ժամանակի կարճ տևողությունում առկայծող դիպվածների նկատմամբ: Կապակցելով դրանք՝ ստեղծում են «պատումային շարակարգություններ», որոնց նպատակն է հաղթահարել դիպվածների պատահականությունն ու անկայունությունը: Հարդյունս՝ բացահայտվում են իրականության այնպիսի խորքեր, որոնք անտեսանելի են «հասարակ դիտողին»: Սակայն պատմությունն այս խնդրում ավելի հետևողական է. նա ի գործ է կարճ տևողության անցքերը տեղափոխել ժամանակի երկար տևողությունների չափույթ: Այդ պարագայում նրանք դառնում են պատմական փաստ՝ իրենց քաղաքակրթական բովանդակությամբ:

Մի դիտարկում ևս. մինչև պատմական փաստի վերածվելը, դիպվածը պետք է անցնի իր «դիպվածայնության» հաղթահարման մի շատ կարևոր, զուտ լրագրողական շրջափուլ, որի ընթացքում նա պետք է ստանա ժանրային կառույց: Վերջինս խնդիր ունի հարադրելու առտնին իրադարձությունները՝ համաձայն որոշակի ասութային լեզվի: Այլ խոսքով, ժանրը չափազանց կարևոր է իրականության պատումային կազմակերպման (տեքստի) համար: Ավելին, այն տեքստի իմաստային ցուցիչն է:

### Երկու մոտեցում

Լրագրային ժանրագիտության հետ կապված՝ այսօր մեզանում առկա է երկու հակադիր մոտեցում: Մամուլի տեսաբանների մի ստվար խումբ, որոնք, ի դեպ, համարվում են հին սերնդի ներկայացուցիչներ, դավանում են խորհրդային

տարիներին հայ լրագրային տեսության մեջ ընդունված տասներեք ժանրերի սկզբունքը, դրանք խմբավորելով ըստ երեք ժանրային խմբի՝ տեղեկատվական, վերլուծական-հրապարակախոսական և գեղարվեստական - հրապարակախոսական: Նման մոտեցման կարելի է հանդիպել նաև վերջին շրջանի մի շարք աշխատություններում և ատենախոսություններում: Մամուլի տեսաբանների մեկ այլ խումբ, որը համարվում է արևմտյան մտածողության կրող, գտնում է, թե անիմաստ է կատարել ժանրային բաժանումներ: Պետք է գրել հետաքրքիր, ըստ էության, լինել օբյեկտիվ և օպերատիվ, և թեման ինքը կթելադրի նյութի կառուցվածքն ու ձևը:

Ժանրագիտության մեջ առկա տարակարծությունը կարելի է բացատրել խորհրդային հասարակարգի փլուզումից հետո հայ գիտական կյանք ներխուժած արևմտյան գրականությամբ (թե՛ որակյալ, թե՛ անորակ) և դիրքորոշումներով, որոնք միախառնվեցին արդեն կարծրացած մոտեցումներին՝ հակասություններ առաջ բերելով ամենատարբեր ուղրտներում: Ավելին, արևմտյան ուղղորդված քարոզչությունը՝ վարկաբեկել այն, ինչ խորհրդային է և գովերգել արևմտյանն ու հատկապես ամերիկյանը, անվստահություն ձևավորեցին մի շարք պատկերացումների հանդեպ: Հայ գիտակցությունը մինչ օրս չի կողմնորոշվել: Պատճառն, ըստ մեզ, ոչ միայն կարծրացած մտածելակերպի և գովազդվող նորի բախումն է, այլև այդ նորի տարակերպ դրսևորումներն ու հակադրվելու միտումը:

Ժանրագիտության բնագավառում տարակարծությունը, որքան էլ ընդունելի է և բացատրելի, այնուհանդերձ, անորոշության մեջ է գցում սկսնակ լրագրողներին, հատկապես լրագրություն ուսանողներին: Խնդրի լուծումը տեսնում ենք երկու տեսակետների ուսումնասիրության և ժանր հասկացության բացահայտման մեջ: Միայն երկու հարացույցների իմացությունը թույլ կտա պատկերացնել խնդրի էությունը և կատարել եզրահանգումներ: Մանավանդ որ երկուսն էլ կարելի է լիարժեքորեն հիմնավորել:

## **Ընդդեմ ժանրերի**

Ինչի՞ համար են լրագրային ժանրերը. չէ՞ որ երբևէ չենք մտածում, թե նյութը հատկապես որ ժանրով պետք է գրել, կամ գրելու ընթացքում դժվար թե որոշենք՝ նյութում չգետեղել հաջողված հարցազրույցը, քանի որ դա կհակասի, օրինակ, դասական հողվածի պահանջներին: Ամենևին, թերևս ուրախ կլինենք համեմել մեր

նյութը տեղին մեջբերումներով, փաստերով, վերլուծությամբ, սարկազմով, այսինքն տարբեր ժանրերի տարրերով և ստանալ լիարժեք ու բազմակողմանի նյութ: Ավելին, բացենք ցանկացած պարբերական. որտե՞ղ կհանդիպենք հստակ որոշակի ժանրով գրված, տարատեսակի բոլոր կանոններին համապատասխանող նյութերի, թերևս միայն մեկ-երկու օրինապաշտ լուրի հանդիպենք, այն էլ, հասկանում ենք, գալիս է ժանրի հզորությունից և ի սկզբանե նրան վստահված առաքելությունից: Ի վերջո, ընթերցողների համար ևս նշանակություն չունի, թե ինչ ժանրով է գրված իրեն մատուցված նյութը, կարևորը՝ այն լինի հետաքրքիր և ըստ էության: Ուրեմն ինչու՞ ծանրաբեռնենք մեր միտքն ավելորդ գիտելիքներով, մանավանդ որ վտանգ կա, թե դրանք կարող են բերել միօրինակության, խանգարել ստեղծագործական անհատականության դրսևորմանը: 13 ժանր առանձնաբար ուսումնասիրելու փոխարեն կարող ենք ժամանակը ծախսել որակյալ լրագրության սկզբունքները յուրացնելու վրա. ինչպե՞ս հավաքել փաստերը, ընտրել վերնագիր, կառուցել նյութը, խմբագրել այն, ընտրել ճիշտ լուսանկար և այլն, այլն... Ըստ էության այս գիտելիքներն էլ հենց տալիս են այսօր արևմտյան, հատկապես ամերիկյան մամուլի տեսաբանների՝ թարգմանաբար ներկայացված գրքերը, փոխառված ուսումնական ծրագրերը. սովորեցնում են գործնական լրագրության հմտությունները, տալիս են բավարար գիտելիքներ լրագրող աշխատելու, որակյալ հոդվածներ գրելու համար, օգնում են լրագրողին՝ հեշտ աշխատանք գտնել: Այս դեպքում, իրոք, ժանրերի գոյությունն անիմաստ է թվում:

### **Յօգուտ ժանրերի**

Ինչո՞վ կարելի է բացատրել ժանրերի գոյության անհրաժեշտությունը և արդարացնել ժանրային դասակարգման համակիրներին: Նախ, պետք է խոստովանենք, որ ժանրերը գոյություն ունեն մեզանից անկախ: Եթե լրագրային ժանրը բնորոշենք իբրև լրագրողական ստեղծագործության տեսակ<sup>1</sup> և ավելացնենք, որ դրանք տարբերակվում են *ըստ նպատակի*՝ մի նյութի նպատակն է տեղեկություն հաղորդելը, մյուսինը՝ վերլուծելը, երրորդինը՝ նկարագրելը և այլն, ու *ըստ գրելաձևի*՝ որոշ նյութեր գրվում են երկխոսության տեսքով, որոշների դեպքում օգտագործվում է պաշտոնական ոճ և ենթադրվում է հակիրճություն, մյուսներում գերակշռում են գեղարվեստաարտահայտչամիջոցները և այլն, ապա պետք է խոստովանենք, որ

լրագրային ցանկացած ստեղծագործություն իրոք գոյություն ունի որոշակի տեսակի մեջ և առանձնանում է վերոհիշյալ սկզբունքներով: Բացի այս, ժանրերը լրագրության մենաշնորհը չեն: Ժանրեր են առանձնացվում արվեստի գրեթե բոլոր բնագավառներում՝ գրականություն, կերպարվեստ, երաժշտություն, պար, կինո, թատրոն և այլն: Գրականագետ-ժանրագետները գտնում են, թե ժանրային բաժանումներ անելու ձգտումը նկատվել է դեռևս հին հունական գեղագիտության մեջ<sup>2</sup>:

Հաջորդ փաստարկը, որ կարող է արդարացնել ժանրերի գոյությունը, հետևյալն է. դրանց առկայությունը մեծապես հեշտացնում է մասնագիտական շփումները: Օրինակ, եթե խմբագիրն ուղարկում է իր լրագրողին որևէ գործարան՝ նյութ գրելու և ասում, թե իրեն գործարանի մասին հողված է պետք, լրագրողն արդեն գիտի, որ պետք է անդրադառնա գործարանի խնդիրներին, պատճառահետևանքային կապեր գտնի երևույթների միջև, կատարի վերլուծություն, հանգի եզրակացության: Եթե հրահանգ է եղել գործարանից լուր բերել, աշխատակիցն իր առջև նպատակ կդնի բացահայտել գործարանի նորությունները: Իսկ եթե հանձնարարված է ռեպորտաժ գրել՝ բնականաբար կլինի նկարագրական խոսք, որը մանրամասնորեն կբացահայտի գործարանի առօրյան: Ժանրերի մասին գաղափար չունենալու դեպքում խմբագիրը ստիպված կլինի ժամանակ կորցնել և մանրամասնորեն բացատրել, թե ինչ բնույթի, բովանդակության նյութ է անհրաժեշտ իրեն: Չբացատրելու դեպքում լրագրողի այցելությունը գործարան կարող է, պարզապես, ապարդյուն լինել: Ասվածն, ինչ խոսք, բավականին լուրջ փաստարկ է ժանրագիտության օգտին:

Ժանրը նաև յուրօրինակ համաձայնություն է ձևավորում լրագրողի և ընթերցողի միջև. վերցնելով թերթը՝ ընթերցողն արդեն գիտի՝ ինչի պետք է սպասի «քրոնիկոն» խորագրի ներքո, խմբագրական հողվածի համար նախատեսված մասում և այլն:

Ժանրի գոյությունը պակաս կարևոր չէ նաև լրագրություն ուսանելու գործընթացում: Կայացած լրագրողի համար հեշտ է կողմնորոշվել, տարիների փորձն ու հմտությունը կարող են իրենք թելադրել նյութի բնույթն ու էությունը, և այս դեպքում այնքան էլ կարևոր չէ, թե ինչ ժանրով է գրված նյութը, մինչդեռ սկսնակ լրագրողի համար ժանրի իմացությունը կարող է կողմնորոշիչ դեր խաղալ և մեծապես օգնել:

Մասնավորապես որոշակի ժանրով գրված նյութի պահանջների և կառույցի իմացությունը կուղղորդի սկսնակ լրագրողին, կսովորեցնի՝ կոնկրետ դեպքում ինչից սկսել, ինչպես կառուցել նյութը, ինչպես ավարտել այն: Օրինակ, եթե ուսանողը գիտի, որ չնայած լուրի դեպքում օպերատիվությունն առաջնահերթ է, այնուհանդերձ հոդվածի կամ թղթակցության համար ընտրված փաստերը կարող են նաև օպերատիվ չլինել, ապա վերլուծական բնույթի նյութ գրելիս կկողմնորոշվի, թե հատկապես ինչ սկզբունքով պետք է ընտրել փաստերը՝ առաջնահերթությունը տալով կարևորությանը: Եվ նման նրբությունները շատ-շատ են. եթե ուսանողը սովորի գրել տարբեր ժանրերով, հետագայում արդեն ամենևին անհրաժեշտություն չի լինի մտածել գրելիք նյութի ժանրային պատկանելության մասին:

Ի դեպ, ժանրերի գոյությունը հաստատողները ևս չեն ժխտում այն փաստը, որ դրանց սահմանները ամենևին էլ կարծրացած չեն, կարելի և ցանկալի է մեկ ժանրի տարրերը կիրառել մեկ այլ ժանրում, մասնավորապես, միօրինակությունից խուսափելու, տեղում չդոփելու, նորանոր ժանրեր ձևավորելու համար: Ի վերջո, ժանրերը կենդանի գործընթացներ են, ծնվում են, որոշակի ճանապարհ անցնում, ձևափոխվում, փոխներթափանցվում, մահանում: Ժանրային փոփոխությունները տեղի են ունենում նյութի մատուցման առավել արդյունավետ տարբերակներ փնտրելու ճանապարհին: Դրանց կայուն վիճակը կարող է կանխել լրագրության զարգացումն ընդհանրապես:

Փորձենք ժանրի գաղափարը մերժողների դիրքորոշմանը մոտենալ մեկ այլ տեսանկյունից ևս. ինչքան էլ նրանք պնդեն, թե անիմաստ է կատարել ժանրային բաժանումներ, այնուհանդերձ հենց իրենք են խորհուրդ տալիս, ասենք ավելին՝ պահանջում, որ փաստերը բաժանվեն վերլուծությունից՝ սա, իրավացիորեն, համարելով արհեստավարժ լրագրության հիմքը, այսինքն՝ տարանջատում են առնվազն երկու ժանրային խումբ: Ավելին, առանձնացնում են որոշ ժանրեր, ինչպես օրինակ՝ լուր (news), լուր-պատմություն (news story), հարցազրույց (interview), ռեպորտաժ (reportage), հոդված (article), ակնարկ (feature), ակնարկ-դիմանկար (profile): Փորձենք տեսականորեն սահմանել վերջիններիս տարանջատման սկզբունքը. թերևս դրանք, ի տարբերություն ժանրամետ տեսության, հիմնականում տարբերակվում են ըստ իրենց նպատակի՝ առավել քիչ ուշադրություն դարձնելով գրելաձևին: Լուրի նպատակը տեղեկացնելն է, լուր-պատմությունն առավել

ամբողջական տեղեկատվություն է տալիս, միաժամանակ օպերատիվ է, հողվածը վերլուծում է, ակնարկ-դիմանկարը նպատակ ունի ներկայացնել մարդու իրական պատկերը...

## Բազմաժանր լրագրություն

Կարելի է արդյո՞ք ժանրի գոյությունը մերժող տեսությունը համարել արևմտյան: Հարցի պատասխանը կարելի է ստանալ՝ ուսումնասիրելով, օրինակ, մամուլի ֆրանսիացի տեսաբանների բավականին մեծաքանակ ուսումնասիրությունները ժանրերի մասին: Նրանցից ոմանք, ի դեպ, հաճախ առանձնացնում են շատ ավելի ժանրեր, քան խորհրդահայ ժանրագետները:

Մամուլի ֆրանսիացի տեսաբանների աշխատություններում կարևորվում է ժանրի գոյությունը: Ըստ նրանց՝ տպագիր մամուլում ինֆորմացիայի կառուցվածքը որոշող կանոնների շարքում լրագրողական ժանրերը հիմնարար են: Դրանք որոշում են ինֆորմացիայի մատուցման ձևը, ընթերցողի սպասումները, աղբյուրների ընտրությունը: Այլ խոսքով՝ *լրագրողական ժանրերը կառուցում են գործնական լրագրության բովանդակությունը*<sup>3</sup>: Շատ դեպքերում «Յետաքրքրի՛ր քո ընթերցողին և տեղեկացրու՛ նրան» արտահայտությունը հայտնվում է «Օգտագործի՛ր ժանրերի ողջ ներկայանակը» խոսքերի կողքին<sup>4</sup>: Ասել է թե՛ արևմուտքում ընթերցողին հետաքրքրելն ու բազմակողմանիորեն տեղեկացնելը պայմանավորվում է հենց ժանրային բազմազանությամբ:

Մամուլի ամերիկացի տեսաբանները, ճիշտ է, առանձնապես չեն շեշտադրում ժանրի գաղափարը (գոնե մեզ հանդիպած աշխատություններում), սակայն հաճախ են նշում ժանրերի և անգամ ժանրային տարատեսակների անվանումներ, ինչպես օրինակ՝ ականատեսի պատմություն կամ առաջին դեմքով գրված լուր (eyewitness story), դարանակալ հարցազրույց (ambush interview), «ծանր» լուր (breaking story), ծաղկազարդ լուր (colored news), խորը հարցազրույց (depth interview)<sup>5</sup> և այլն:

Բացի այդ, ամերիկյան կամ ֆրանսիական լրատվամիջոցի ցանկացած նյութ կարելի է քննել մեր ավանդական տասներեք ժանրերի համակարգով, մասնավորապես, նրանց այսպես կոչված լուր-պատմությունները (news story) հիմնականում համապատասխանում են մեր տեղեկատվական տեսություններից կամ տեղեկատվական թղթակցություններից, ակնարկները (feature)՝ թղթակցություններից կամ ռեպորտաժներից: Ի դեպ, նման փորձ արդեն իսկ արվել է մեր կողմից.

տասներեք ժանրերի համակարգով տվել ենք ֆրանսիական հանրահայտ «Le Monde» օրաթերթի ժանրային նկարագիրը<sup>6</sup>:

Մամուլի ռուս տեսաբաններն այս առիթով առաջ են քաշում հետաքրքիր տեսակետ, ըստ որի անգամ այն լրագրողները, ովքեր ասում են, թե հաշվի չեն առնում ժանրային տարբերակումները և ստեղծագործում են այնպես, ինչպես պահն է թելադրում, իրենք ևս հաճախ ստեղծագործում են ավանդական ժանրերի մեջ. այս դեպքում, պարզապես, գործում է նմանական տեսությունը, նրանք նմանակում են դաշտում առկա միտումները և, առանց գիտակցելու, գրում որոշակի ժանրում<sup>7</sup>:

Այս ամենի համատեքստում ծագում է վերջին հարցը. լրագրային ժանրագիտությունն, ի վերջո, ունի՞ ապագա, թե՞ այն արհեստականորեն առաջ եկած տեսություն է, որը կարելի է դասել մահացող գիտությունների շարքին: Մամուլի որոշ ռուս տեսաբաններ, արտահայտելով պրակտիկ լրագրությանը զբաղվողների դիրքորոշումը, պնդում են, թե ժանրերից պետք է պարզապես օգտվել, տեսությունն այստեղ անելիք չունի<sup>8</sup>: Վերոշարադրյալ փաստերի համադրությունը, սակայն, կարծես հակված է ապացուցելու, թե ժանրագիտությունն, այնուամենայնիվ, ապագա ունի մեզանում: Այս գիտության էությունը միշտ կմնա նույնը՝ ուսումնասիրել ժանրային համակարգերը, բացահայտել դրանց զարգացման միտումները, նպաստել առավել արհեստավարժ, բազմաժանր լրագրության ձևավորմանը: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է առաջին հերթին մեր լրագրային ժանրերի այսօրը, առկա միտումները բացահայտելու, դրա հիմքի վրա մեր լրագրության ընթացքն ու ապագան որոշելու խնդիրներով:

<sup>1</sup> ժանր (ֆրանսերեն genre)՝ թարգմանաբար նշանակում է տեսակ, սեռ, կերպ:

<sup>2</sup> «Գրական ժանրեր, պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը», Չայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1973, էջ 8-9:

<sup>3</sup> Տե՛ս <http://calenda.revues.org/nouvelle4450.html>

<sup>4</sup> Տե՛ս [http://www.clemi.org/medias\\_scolaires/outils/interesser.html](http://www.clemi.org/medias_scolaires/outils/interesser.html)

<sup>5</sup> Տե՛ս Լրագրողական հասկացությունների անգլերեն-հայերեն հակիրճ բառարան, Լրատվության հիմունքներ, գործնական ձեռնարկ լրագրողների համար, Երկրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2003, էջ 56-82:

<sup>6</sup> Տե՛ս Մենենշյան Ա., Ֆրանսիական «Le Monde» օրաթերթի ժանրային նկարագիրը, «Ժուռնալիստիկա (Տեսության և պատմության հարցեր)», Պրակ Ը, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2007, էջ 75-98:

<sup>7</sup> Шибалева Л., Жанры в теории и практике журналистики, Учебно-методическое пособие, <http://www.evartist.narod.ru/text3/82.htm>

<sup>8</sup> Անդ:

### Genre developments: pro and com of genre science

Nowadays there are two controversial points of view related to the journalism genres. Huge part of the press theorists generally recognizes 13 genres as it was accepted in the Soviet Union period. Another side of the theorists thinks it makes no sense to differ any genres: it is more important- write interesting, be objective and efficient, be specific, and the topic itself will dictate the construction and form of an article.

Those who reject the existence of any genre think-we have never thought in which genre to write a story.

Those who recognize genres repeat- genres exist anyway, existence of genres makes easy professional relations, help in journalism education.

Nevertheless, genre science has a future in our life. It is aim to examine structures of genres, explore trends of developments, help the formation of genre variety and professional journalism.